



ԽԱՆՈՒՄ ԱՎԱՆՅԱՆ

Տոնածառը

Երեք օր էր չէի խմել հաբերս , ականջներիս մեջ ահավոր խշշում էր: Կամ անձրև էր կամ էլ համակարգչի խշշոցն էր այդքան բարձր: Հանգստացնող մի քանի հաբեր կուլ տվեցի, տղամարդ լինեի կծխեի կամ կխմեի՝ Էն թունդերից: Ահավոր լարված էի,զգացի ՝ ձեռքիս մեջ բաժակը ուժից կկոտրվի, բոլորը նայում էին ինձ, ժպտացի ու դրեցի սեղանին: Չգիտեին ինչ հաբեր են խմում: Չինքնասպանվելու հաբեր:Այնքան լարված, որ ծրագրում էի գրքիս անունը դնել ՝ 100 օր ինքնասպանվելուց առաջ : Հետո հիշեցի այդ նախադասությունը ինչ որ գրքի վերնագիր էր: Ափսոսեցի: Գնացի ուրիշ սենյակ: Նորից բացեցի հուշերի տուփը: Հորս հիշեցի, նրա ոտքերի քայլերից, ձայնից էր խշշոցը: Տարիներ առաջ գյուղում մի մարդ կար, որ փայտ էր կոտրում օղու փոխհատուցմամբ, բայց մեր համար տոնածառ էր բերում ամեն Նոր տարին: Նրա անունը Անդեր կամ անտեր Շուն էր, որպես շնորհակալություն մի լիտր օղի էր տալիս հայրս ու ամեն անգամ այնքան երկար էր լինում տոնածառը որ գազաթը ծովում էր առաստաղին դիպչելուց: Ունեինք կանաչ չորստոնանի հենակ տոնածառի համար նախատեսված ու ամեն տարի այդ հենակի մեջ սեպ էինք խրում ՝ տոնածառի ամրության համար: Մի քանի օր տոնածառը չէինք զարդարում, ինչու , չգիտեմ : Օրենք էր: Տոնածառի բույրը տարածվում էր տնով մեկ: Այնքան լայն էր սաղավարտը : Բայց ինչու Անդեր կամ Անտեր, միշտ հարց են տվել: Եթե անդեր էր , ինչու էր անտեր: Կամ եթե անտեր էր, դեր կունենար: Հետո զարդարում էինք՝ կարմիր, սպիտակ նախշերով , միջին չափերով խաղալիքներով , դրանք սովետական խաղալիքներ էին ու հիմանականում միանման էին: Աստղի դերը տանում էր երկարավուն մուգ կարմիր , ապակուց տոնածառ, ծայրը երկար, ինչպես տոնածառը: Այնքան էինք ուրախանում Անդեր Շանը տեսնելով, այդքան

իր երեխաները չէին ուրախանում իրեն տեսնելով : Նրա վրայից անընդհատ օդու հոտ էր գալիս, կեղտոտ բոթասներով էր , դասական կարկատած տաբատով, չէր սափրվում , հիսուն անց տղամարդ էր: Հորս մահից հետո ևս մի տարի տոնածառ բերեց, բայց չգարդարեցինք : Բերեց, դրեց հյուրասենյակի մեջտեղում ու ասաց. –Արմոն չնեղանա ինձյանից, վեր բախտոնց հըմար տոնածառ չեմ պիրել: Ամեն տարի կըպիրեն , չվախեք: Թե էդ ծառը հագնելիք էր, ուտելիք էր: Ուրախություն էր: Մի լիտր օդին չվերցրեց, նրա վրայից օդու հոտ չէր գալիս: Նրա հայացքում այնքան խղճահարություն կար մեր նկատմամբ, բայց ինչու , այդպես էլ չիմացա: Այդ տարին տոնածառը եկավ, բայց այդպես էլ Նոր տարին չեկավ : Այնքան չեկավ, որ դարպասները փակել էին : Նոր տարին քայլեց ուրիշների տուն, մեր տոնածառը գարդարած չէր, չեկավ: Հաջորդ տարիների տոնածառները արհեստական էին, Անդեր Շունը մահացել էր: Մեր տոնածառները մնացին անտառում, հասակ առան, հասակ առան ինչպես մենք: Գրքի վրա Տոնածառ կգրվի որպես անուն: